


ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ



Ես՝ Մարիամ Վռամի Հովսեփյանս, ծնվել եմ 1968 թ. մայիսի 19-ին՝ Երևանում:

1975-1985 թթ. սովորել և ոսկե մեդալով ավարտել եմ մայրաքաղաքի թիվ 170 միջնակարգ դպրոցը:

1985-1990 թթ. սովորել և գերազանցության դիպլոմով ավարտել եմ ԵՊՀ քանասիրական ֆակուլտետը:

2001թթ. ավարտել եմ ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի հեռակա ասպիրանտուրան:

2001թ. ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի գիտխորհրդում պաշտպանել եմ թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով քանասիրական գիտությունների գիտական աստիճան «Ժուռնալիստիկա» կոդով: Ատենախոսությանս թեման էր՝ «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը 1909-1915 թթ.»:

2001-2002 թթ. դասախոսել եմ Սմբատ սպարապետի անվան իրավաբանական ինստիտուտի, իսկ 2002-2003 թթ.՝ Երևանի Մենեջմենթի, 2003-2008թթ և 2010-2012 թթ.՝ Երևանի «Գալիք», 2011-2014 թթ.՝ Հյուսիսային, 2012-2015թթ. Երևանի պետական համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետներում:

2007-2015 թթ. դասավանդել եմ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի Լրագրության ֆակուլտետում:

2006 թ. ապրիլից առ այսօր աշխատում եմ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հայ մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնում նախ՝ որպես գիտաշխատող, ապա՝ որպես ավագ գիտաշխատող:

2010-2014 թթ. ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետում, որպես պաշտոնական ընդդիմախոս, մասնակցել եմ 3 ատենախոսության պաշտպանության:

2011 թ. մասնակցել եմ Հյուսիսային համալսարանում տեղի ունեցած Հումանիտար գիտությունների արդի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովին: Ջեկույցիս թեման էր «Վանի «Աշխատանք» շաբաթաթերթի հասարակական-քաղաքական հավատամքը 1910-1915 թթ.»:

2011 թ. մասնակցել եմ Հայաստանի Հանրային գրադարանում տեղի ունեցած «Հայկական տպագրություն. անցյալը և ներկան» խորագրով գիտաժողովին: Ջեկույցիս թեման էր՝ «Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթը որպես արևմտահայ կյանքի տարեգիր (1909-1915 թթ.)»:

2012 թ. մասնակցել եմ Հյուսիսային համալսարանում տեղի ունեցած «Մասնագիտական կրթության որակի ապահովման արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովին: Ջեկույցիս թեման էր «Կրթական հիմնախնդիրների արձարծումը Նիկոմիդիայի «Բյութանիա» շաբաթաթերթի էջերում (1910-1912 թթ.)»:

2012 թ. մասնակցել եմ Ջավեն արքեպիսկոպոս Եղիայանին նվիրված «Հայոց հարց» հաղորդաշարի նոյեմբերի 27-ի հաղորդմանը:

2013 թ. մասնակցել եմ Հյուսիսային համալսարանում տեղի ունեցած «Հովհաննես Թումանյանը և արդիականությունը» խորագրով հանրապետական և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ժամանակակից խնդիրները» խորագրերով միջազգային միջբուհական գիտաժողովներին, ինչպես նաև՝ ԳԱԱ Պատմության ինստիտուտի կազմակերպած և հայ տպագրության 500-ամյակին նվիրված «Հայ տպագրությունը դարերի միջով» խորագրով գիտաժողովին: Ջեկույցներիս թեմաներն էին համապատասխանաբար՝ «Արևմտահայ մամուլի արձագանքները Հովհ. Թումանյանի ուղևորություններին Արևմտյան Հայաստան (1915 թ. և 1921 թ.)», «Նիկոմիդիայի «Բյութանիա» շաբաթաթերթը (1910-1912 թթ.)» և «Արևմտահայ գրատպության պատմությունից»:

2014 թ. մասնակցել եմ Հյուսիսային համալսարանում տեղի ունեցած «Բուհերի ակադեմիական ազատությունների և մրցակցային պայմանների ապահովումը՝ բարձրորակ կրթության գրավական» միջազգային գիտաժողովին: Ջեկույցիս թեման էր «Կրթական հիմնախնդիրները Իզմիրի «Աշխատանք» պարբերականի էջերում (1910-1914 թթ.)»:

2014 թ. մասնակցել եմ ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետում տեղի ունեցած «Ժուռնալիստը և ժուռնալիստիկան գլոբալ գործընթացների համապատկերում» խորագրով գիտաժողովին: Զեկուցմանս թեման էր «Իզմիրի «Աշխատանք» պարբերականը (1910-1915 թթ.)»:

2014 թ. «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնում մասնակցել եմ դասախոսների վերապատրաստման դասընթացներին:

2015 թ. ԵՊՀ հրատարակչությունը տպագրեց իմ գրած դասախոսությունների ձեռնարկը, որի վերնագիրն է «Արևմտահայ մամուլի պատմություն (1832-1915 թթ.)», իսկ էջերի քանակը 90 է: Գիրքը տպագրության է երաշխավորել ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի գիտխորհուրդը:

2015 թվականին ընթացքում որպես փորձագետ ընդգրկվել և աշխատել եմ www.armeniangenocide100.org կայքի «Մամուլը 100 տարի առաջ» բաժնում:

2017 թ. հունիսի 20-ին ՀՀ Կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանի թիվ 714-Ս/2 հրամանով որպես ուսումնասօժանողակ նյութ է ճանաչվել երկհատոր (1200 էջ) աշխատանքը՝ «Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում» վերնագրով հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածուն (խմբագրական կազմ՝ Գ. Մանուկյան, Ա. Մարության, Ժ. Պեօճեքեան, Ա. Ոսկանյան, Մ. Հովսեփյան):

2017 թ. մայիսի 8-9-ին Ստեփանակերտի պետական համալսարանում տեղի ունեցավ Շուշիի ազատագրման 25-ամյակին նվիրված գիտաժողով, որտեղ ներկայացվել է «Շուշիի Առանձին հրաձգային գումարտակի մարտական ուղին (1991-1994 թթ.)» վերնագրով իմ զեկուցումը:

2018 թ. մայիսի 25-26-ին մասնակցել եմ «Հայաստանի Հանրապետություն 100» խորագրով միջազգային գիտաժողովին: Զեկուցմանս թեման էր՝ «Գաղթականների և որբերի նկատմամբ Առաջին հանրապետության քաղաքականության լուսաբանումը Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի էջերում»:

2018 թ. մայիսի 25-26-ին մասնակցել եմ Հայաստանի Հանրային հեռուստարձևերության տոնական հաղորդմանը և ներկայացրել եմ Հայաստանի 1-ին հանրապետության մամուլը:

2018 թ. որպես փորձագետ մասնակցել եմ Հանրային ռադիոյի «Հայկական հետք» հաղորդաշարի հունիսի 11-ի հաղորդմանը, որը նվիրված էր հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս Երվանդ Ֆրանկյանին:

Մենագրություններ

1. «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը 1909-1915 թթ.» («Սեղմագիր», Երևան, 2001, ԵՊՀ գրադարան, 20 էջ),
2. «Կ.Պոլսի ՀՅԴ պարբերական մամուլը ազգային-ազատագրության ջահակիր 1909-1915 թթ.», Երևան, 2003, 108 էջ,
3. «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.)», Երևան, 2009, 195 էջ,
4. «Արևմտահայ մամուլի պատմություն (1832-1915 թթ.)», Երևան, 2014, 90 էջ,
5. «ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերական մամուլը Օսմանյան Թուրքիայում 1909-1915 թթ. և 1918-1923 թթ.», Երևան, 2016, 310 էջ,
6. «Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու)» (խմբագրական կազմ՝ Գ. Մանուկյան, Ա. Մարուքյան, Ժ. Պեժճեքան, Ա. Ոսկանյան, Մ. Հովսեփյան), հ. 1-ին, Երևան, 2018, 618 էջ:

Հոդվածներ

1. ««Ազատամարտը» ազգային-ազատագրության ջահակիր»
(«Ազատամարտ» շաբաթաթերթ, Երևան, 1991, թիվ 38, էջ 8),
2. ««Ազատամարտի» հասարակական-քաղաքական հավատամքը»
(«Միտք» գիտատեսական հավելված, Երևան, 1993, թիվ 4, էջ 6-10),
3. ««Ազատամարտ» թերթը»
(«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, 1994, թիվ 1, էջ 61-71),

4. «Արևմտահայերի ներազգային կյանքը «Ազատամարտի» էջերում»
(ՀԳՄ «Նոր դար» ամսագիր, Երևան, 2000, թիվ 2, էջ 156-158),
5. «Հողային իրավունքը «Ազատամարտ» օրաթերթում»
(«Օրենք և իրականություն» իրավաբանական-գիտահանրամատչելի հանդես, Երևան, 2001, թիվ 22, էջ 24-26),
6. «ՀՅԴ-ն և Կ.Պոլսի դաշնակցական մամուլը 1909-1915 թթ.»
(«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, 2001, թիվ 1, էջ 211-223,)
7. «Օսմանյան խորհրդարանի աշխատանքների լուսաբանումը Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթում»
(«Օրենք և իրականություն» իրավաբանական-գիտահանրամատչելի հանդես, Երևան, 2002, թիվ 6, էջ 24-28),
8. «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլն իբրև կուսակցության գաղափարախոս»
(«Դրոշակ» եռամսյա պաշտոնաթերթ ՀՅԴ, Երևան, 2002, թիվ 4, էջ 57-74),
9. «Թուրքիայի ռազմական և կրթական համակարգերի հիմնահարցերը Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթում»
(«Օրենք և իրականություն» իրավաբանական-գիտահանրամատչելի հանդես, Երևան, 2003, թիվ 1-2, էջ 31-33),
10. «ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1920 թթ.)»
(«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, 2006, թիվ 3, էջ 177-182),
11. «Հայերի ցեղասպանությունը Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի էջերում
(«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, 2007, թիվ 1, էջ 75-79),
12. «Կ.Պոլսի «Հայ սկաուտ» հանդեսը (1919-1922 թթ.)»
(«Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007, թիվ 8, էջ 275-286),
13. «ՀՅԴ Կ.Պոլսի «Ազատամարտ» և «Ճակատամարտ» օրաթերթերը»
(«Դրոշակ» ամենամսյա պաշտոնաթերթ ՀՅԴ, 2007, թիվ 1, էջ 55-59),
14. «Կ.Պոլսի «Շանթ» հանդեսը (1918-1919 թթ.)» («Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2008, թիվ 9, էջ 207-218),
15. «Շանթ» հանդեսը 1911-1915 թթ.»
(«Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, 2008, թիվ 3, էջ 56-67),

16. «Արևմտահայ լրագրության դրոշակակիրը. Կ.Պոլսի «Ազատամարտ» օրաթերթի 100-ամյակի առիթով»
 («Վեմ» համահայկական հանդես, Երևան, 2009, թիվ 2, էջ 70-80),
17. «Ազատամարտ» օրաթերթի գրական հավելվածը (1910-1913 թթ.)»
 («Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, թիվ 3, 2009, էջ 144-149),
18. «Հայերի ցեղասպանությունը Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթի նյութերում (1918 թ.)»
 («Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Երևան, 2009, թիվ 6, էջ 305-312),
19. «Թիֆլիսի «Նոր հոսանք» ամսագիրը (1913-1915 թթ.)»
 («Հայոց պատմության հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2010, թիվ 11, էջ 182-197),
20. «Վանի «Աշխատանք» շաբաթաթերթը (1910-1915 թթ.)»
 («Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, 2011, թիվ 4, էջ 236-251),
21. «Վանի «Աշխատանք» շաբաթաթերթի հասարակական-քաղաքական հավատարմը 1910-1915 թթ.»
 («Հումանիտար գիտությունների արդի հիմնախնդիրները», Երևան, 2011, էջ 165-175),
22. «Կրթական հիմնախնդիրների արծարծումը Նիկոմիդիայի «Բյութանիա» շաբաթաթերթի էջերում (1910-1912 թթ.)»
 (««Մասնագիտական կրթության որակի ապահովման արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովի նյութեր», Երևան, 2012, էջ 280-290),
23. «Նիկոմիդիա նահանգի «Բյութանիա» շաբաթաթերթը (1910-1912 թթ.)»
 («Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2012, թիվ 3, էջ 33-44),
24. «Զավեն պատրիարքի գործունեությունը Կ.Պոլսի ՀՅԴ մամուլի լուսաբանմամբ (1909-1915, 1918-1922 թթ.)»
 («Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2013, թիվ 1, էջ 131-140),
25. «Նիկոմիդիայի «Բյութանիա» շաբաթաթերթը (1910-1912 թթ.)»
 («Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2013, թիվ 1-12, էջ 465-498),
26. «Արևմտահայ մամուլի արձագանքները Հովհ. Թումանյանի ուղևորություններին Արևմտյան Հայաստան (1915 թ. և 1921 թ.)»

- («Հովհ. Թումանյանը և արդիականությունը» հանրապետական միջբուհական գիտաժողովի նյութեր», Երևան, 2013, էջ 212-224),
27. «Արևմտահայ գրատպության պատմությունից»
(«Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2013, թիվ 2 /8/, էջ 50-57),
28. «Սեբաստիայի «Հողդար» շաբաթաթերթը (1910-1914 թթ.)»
(«Հանդես ամսօրեայ», Վիեննա-Երևան, 2014, թիվ 1-12, էջ 97-135),
29. «Կրթական հիմնախնդիրները Իզմիրի «Աշխատանք» պարբերականի էջերում (1910-1914 թթ.)»
(«Բուհերի ակադեմիական ազատությունների և մրցակցային պայմանների ապահովումը՝ բարձրորակ կրթության գրավական» միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2014, էջ 178-184),
30. «Իզմիրի «Աշխատանք» պարբերականը (1910-1915թթ.)»
(«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2014, թիվ 3, էջ 37-46),
31. «Կարինի «Ալիք» պարբերականը (1914 թ.)»
(«Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2015, թիվ 1 /11/, էջ 35-43),
32. «Հայ որբերի հիմնախնդիրը Կ.Պոլսի «Ճակատամարտ» թերթում (1918-1924 թթ.)»,
(«Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2016, թիվ 3, էջ 99-108),
33. «Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ.Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (1918-1924 թթ.)»
(«Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, թիվ 4, էջ 95-104),
34. «Հայ գաղթականների ունեզրկման և որբերի ուժացման խնդիրները Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթի էջերում (1918-1922 թթ.)»
(«Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2017, թիվ 1, էջ 65-52),
35. «Արևմտահայության ներգաղթի և որբերի հիմնախնդիրները Հայաստանի 1-ին հանրապետությունում ըստ «Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումների (1918-1920 թթ.)»
(«Միոն» եռամսեայ պաշտօնաթերթ Երուսաղեմի Հայ պատրիարքութեան, Երուսաղեմ, 2017, թիվ 4-5-6, էջ 26-31),
36. «Շուշիի Առանձին հրաձգային գումարտակի մարտական ուղին (1991-1994 թթ.)»
(«Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2017, թիվ 2, էջ 37-45):

